
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՀԵՔԻԱԹԱԳԻՐԸ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ

Ավետիք Բսահակյանը ստեղծագործել է արձակի գրեթե բոլոր ժանրերով. բանաստեղծի ստեղծագործական տեսադաշտում է գտնվել նաև հեքիաթը: Հաշվի առնելով ժանրի ձևակադրապարային, ոճական առանձնահատկությունները՝ Բսահակյանը հեքիաթը դիտարկում է որպես հայկական արձակը զարգացնելու նմուշ-նախատիպ. «Ես գրելու եմ իմ ժողովրդի կյանքը ներկայացնող վեպերը, պատկերները մեր հեքիաթների ոճով, ոգով, ձևով. ա՛յդ է հայկական պրոզաձևը, դրանից պիտի զարգացնել մեր բունները: Գրել, գրել միայն ազգային ոգով, գրել հայկական, հայավար, հայնակ գրել...»¹: Նման նկատառումների իրագործումը, Բսահակյանի կարծիքով, պետք է ուղեկցվեր հեքիաթների խորագննությամբ՝ «Ուսումնասիրել մեր հեքիաթներն ու երգերը»², – համոզմունք, որն արտահայտված էր բանաստեղծի «Հիշատակարանում»:

Դեռևս մանկության օրերին Բսահակյանի «երևակայությունը թնավորվեց դարերի խորքից եկող բանաստեղծական ֆոլկլորով»³, ժողովրդական հեքիաթով: Նրա ստեղծագործական կապը հայ բանավեստի, աշուղական և գուսանական պոեզիայի հետ ունի խորը արմատներ, որոնք երկարում են մինչև գրողի մանկությունը: Դա են հաստատում Պ. Մակինցյանի վկայությունները. «Նա մանկութ թափառել է Ալազյազի փեշերը, Արփաչայի ափերը, հայրական ջաղացքի շուրջը և ջաղացպան ուստա Գրիգորի գեղաբույր երգ ու հեքիաթին ականջ դրել:

Նա մանկութ սիրել է թափառական աշուղներին և դյուրվել ժողովրդի հյուսած անպաճույճ խաղերից»⁴:

Դա են փաստում Բսահակյանի հուշերը. «Հայրս ուներ մի աշուղ բարեկամ, մեր դրացի գյուղից, աշուղ Գայուստ անունով: Լավ սագ էր նվագում, անուշ, թավ ձայն ուներ՝ սրտից խոսող, շա՛տ հեքիաթներ գիտեր: Պարսկական, թրքական, հայկական անթիվ հեքիաթներ: Իր սիրտ վեպն ուներ՝ արևելքի հեքիաթների տարրերով և գույներով հյուսած: Ամեն շաբաթ, կեսօրից հետո, սագը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում էր ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի: Եվ երկուշաբթի առավոտ մեկնում էր սագը վզից կախ, առատ վարձատրված: Ինչքա՛ն, ինչքա՛ն էի սիրում աշուղ-ամուն: Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար...»

¹ Ավ. Բ ս ա հ կ յ ա ն. Հիշատակարան, Երևան, 1977, էջ 277:

² Տե՛ս նույն տեղում:

³ Ավ. Բ ս ա հ կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 89:

⁴ Պ. Մ ա կ ի ն գ յ ա ն. Դիմագծեր, Երևան, 1980, էջ 74:

Նրա սազն ու հեքիաթը այլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը⁵:

Բսահակյանը ջերմորեն է հիշում «անուշ տատիկներին» լսած «հոգի կախարդող հեքիաթներն» ու «փորձաշատ պապիկներին» գրույցները, նրանց խոսքն ու առածը, «թափառական գուսանների և գյուղացի աղջիկներին» «չքնաղ տաղերն ու խաղերը, մեր մեղսը՝ սրտահույզ երգերը», ինչպես նշում է բանաստեղծը՝ «Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը», որին ինքը երախտապարտ էր⁶: Բսահակյանը քաջատեղյակ էր ոչ միայն հայկական բանահյուսությանը, այլև ծանոթ էր՝ համաշխարհային բանարվեստին (հնդկական, չինական, պարսկական, արաբական, հրեական, քրդական, սերբական, ռուսական, ֆրանսիական, գերմանական և ֆիննական բանահյուսություններին)⁷:

Բանաստեղծն իր ստեղծագործական կյանքի գրեթե բոլոր շրջաններում կենարար լիցքեր է ստացել բանահյուսությունից՝ գեղարվեստական մշակման ենթարկելով ժողովրդական երգեր, ավանդություններ, առակներ, լեգենդներ ու հեքիաթներ՝ համեմեղով դրանք ժողովրդայնության շնչով:

Պ. Մակինցյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Եվ որպես կավր – քանդակագործին, ներկ ու կտավր–նկարչին, հնչյունները–երաժշտին, այնպես էլ բնությունը, ժողովրդի ստեղծագործությունն ու բարբառը Ավ. Բսահակյանին լուրջ նյութ են մատակարարում իր ներքին աշխարհը, իր ապրումները դրսևորելու»⁸:

Ա. Բսահակյանը հեքիաթի ժանրում սկսել է աշխատել 900-ական թվականների սկզբից [«Աշխարհի գեղեցկուհին», 900-ական թվականներ, «Ամենապիտանի բանը», 1904, «Արևի մոտ», 1905, «Հողն է մարդու աչքը կշտացնում», 1906, «Հեքիաթ», 1910 (վերամշակվել է 1924 թ.), «Աղա Նազար», 1911, «Մաղասաբերդի տիրուհին», գրվել է 1920-ական թվականների առաջին կեսին, «Գասպարը», գրության ժամանակը հայտնի չէ. առաջին անգամ տպագրվել է 1938 թ., «Արդար մարդը», 1940, «Նուկիմ քաղաքի խելոքները», 1940]՝ ստեղծելով հիմնականում իրապատում հեքիաթներ և հրաշապատում հեքիաթների տարրերով գործեր:

Բսահակյանի հեքիաթներն առանձնանում են մարդկային բնավորությունների հակադրությամբ, սոցիալական պախարակելի կողմերի լուսաբանմամբ, ինչպես նաև հասարակության և անհատի համար կարևորագույն այնպիսի արժեքների փառաբանությամբ, ինչպիսիք են՝ խոսքի և իրավունքի ազատությունը, իրավահավասարությունը, քաղաքացիական զիտակցությունը, հասարակության յուրաքանչյուր անհատի կրթություն ստանալու իրավունքն ու պաշտպանվածությունը: Բանաստեղծն իր հեքիաթներում կարևորագույն արժեք է հռչակում «զիտության լույսը» («Ամենապիտանի բանը») անկեղծ հիանում անհաշվենկատ սիրո հավերժությամբ

⁵ Ավ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 4, էջ 119: Նաև՝ Ավ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Ավետիք Բսահակյան գիտական կենսագրություն, գիրք I (1875–1900), Երևան, 2000, էջ 68–69:

⁶ Տե՛ս Ավ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 4, էջ 168:

⁷ Տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1986, էջ 201:

⁸ Պ. Մ ա կ ի ն գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 74:

(«Հեքիաթ») և ուրախանում անօգնական որբուկի երջանկությամբ («Արևի մոտ»):

Ի տարբերություն հայ հեքիաթագրության մեջ ձևավորված որոշակի ավանդությունների՝ Բասահայանը որպես հեքիաթագիր ուղղորդվում է այլ սկզբունքներով. նրա հեքիաթներին բնորոշ չէ ընդգծված դիդակտիկ-մանկավարժական ուղղվածությունը: Տեսնելով և կարևորելով գրականության «կրթիչ» նշանակությունն ու «մարդու հոգեբանությունը» «հզոր կերպով վերաստեղծելու», «վերակերտելու, վերաշինելու» հնարավորությունները՝ հեքիաթագիրը, այնուամենայնիվ, հեռանում է մանկավարժական կողմնորոշումից, ինչը բնորոշ էր վաղ շրջանի հայ հեքիաթագրությանը: Բասահայանը հրաժարվում է մարդուն «կաղապարով ձուլող» ուսուցչությունից՝ ընթերցողին հնարավորություն ընձեռելով ինքնուրույն քննել «մարդկության փորձերի պատմություններն» ու «քննելով սովորել»⁹: Այսպես, «Ամենապիտանի բանը» հեքիաթում, խոսելով լուսավորության կարևորության մասին և գերագույն արժեք համարելով գիտության լույսը, Բասահայանը խուսափում է ընդգծված խրատաբանությունից կամ կրթադաստիարակչական շեշտադրումներից՝ ներագդելով արտահայտիչ խոսքի ենթագիտակցական ընկալումների օգնությամբ¹⁰:

Հեքիաթագրությունը Բասահայանի համար ոչ միայն ժողովրդական հեքիաթի գեղարվեստական մշակման և ոճավորման, այլև հեղինակային գործեր ստեղծելու բնագավառ էր: Վերջիններս ստեղծվում էին ժողովրդականի օրինակով՝ բանահյուսական հեքիաթների որոշ մոտիվների գործածությամբ. այսպես, «Արևի մոտ» հեքիաթ-նովելում հեղինակը ներառում է հետևյալ մոտիվները.

1. որբ երեխայի ճամփորդությունը դեպի արևը, որը հիշեցնում է ժողովրդական հեքիաթների հերոսի կատարած դժվար հաղթահարելի ճամփորդությունները դեպի հեռավոր կախարդական վայրերը,

2. որբ երեխայի հանդիպումը հովվի հետ, որը կարելի է գուցե ասել ժողովրդական հեքիաթների հերոսի և ճամփաբաժան վայրերում նստող ծերունու կամ քաղաքների արվարձանում ապրող բարի պատավի հանդիպման հետ և այլն,

3. որբ երեխայի՝ արևի հետ ունեցած հանդիպման մասին սիմվոլիկ երազը. նման պատմություններ առկա են նաև ժողովրդական հեքիաթներում ու ավանդություններում¹¹:

«Աշխարհի գեղեցկուհին» հեքիաթի միայն վերնագիրն է ժողովրդական, հեքիաթն ամբողջությամբ հեղինակային ստեղծագործություն է¹²:

Հեքիաթի ժանրային որոշ առանձնահատկություններ բանաստեղծն օգտագործում է նաև այլ ժանրերի ստեղծագործություններում. այսպես, հեքիաթի, գրույցի, պատմվածքի, նովելի, ավանդության ու առակի միահյուսում է Բասահայանի

⁹ Տե՛ս Ա.վ. Բ. ս. ա. հ. ա. կ. յ. ա. ն. Ծանոթ և անծանոթ էջեր, Երևան, 1988, էջ 310:

¹⁰ Տե՛ս Ա.վ. Բ. ս. ա. հ. ա. կ. յ. ա. ն. Հիշատակարան, էջ 132:

¹¹ Տե՛ս Ա. Ն. ա. լ. զ. յ. ա. ն. Մ. կ. յ. ա. ն. Էթնիկական մանկավարժություն, Երևան, 2003, էջ 33:

¹² Տե՛ս Ա. Ղ. ա. ն. ա. լ. ա. ն. յ. ա. ն. Ավետիք Բասահայանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1955, էջ 50-51:

¹³ Տե՛ս Ա.վ. Բ. ս. ա. հ. ա. կ. յ. ա. ն. Ծանոթ և անծանոթ էջեր, էջ 323:

«Ուստա Կարո» (1910–1950) մեծածավալ վեպը, որը ժանրային առումով սինկրետիկ էրկ է¹⁴: «Ահմեդի ուղտը» (1912) արձակ առակն ունի կիսահեքիաթային - կիսասատածային հյուսվածք, իսկ «Այդ ոչինչը ես եմ» (1945) առակը հատկանշվում է հեքիաթի, առած-ասացվածքի տարրերով¹⁵: «Մոր սիրտը» (1919) ավանդավեպում նկատելի է հեքիաթային-ֆանտաստիկ մոտիվների առկայություն (մոր սրտի փոխարեն սպանված այծյամի սիրտ բերելն ու մոր հանված սրտի լեզու առնելը)¹⁶:

Բսահակյանի պոեզիայում, գործածվում է անձնավորման ու շնչավորման բանաստեղծական ձևը, որը հատուկ է ժողովրդական լեզվամտածողությանը և կիրառվում է բանահյուսական տարրեր ժանրերում (հեքիաթ, առակ, երգ և այլն)¹⁷:

«Հիշատակարանում» Բսահակյանը «շատ փիլիսոփայորեն և խորն ու հարմար» է համարում նույնիսկ պատմությունը սկսել «մեր հին հեքիաթների ձևով՝ հեքիաթների սկսվածք-բանաձևերի նմանությամբ. «Որովհետև կյանքը, մարդը, բնությունը, տիեզերքը անցավոր են, ուրեմն երազ են, ուստի շատ փիլիսոփայորեն և խորն ու հարմար կլինի մեր հեքիաթների ձևով սկսել պատմությունը, օրինակ այսպես. «Եղել է չի եղել, ժամանակով, շատ դարեր առաջ, մի թագավոր է եղել, անունը Նապոլեոն»...»¹⁸:

Բսահակյանի հեքիաթներում հաճախ ժողովրդական հեքիաթների խորհրդանշանները ստանում են նոր գունավորում, վերախմաստավորում: Հեքիաթագիրը փաստում է, որ «հին հեքիաթների» սիմվոլիկ ուժերն իր հեքիաթներում պետք է ստանան նոր փոխակերպումներ. «Հին հեքիաթների չարերը, չար ուժերը՝ դև, վիշապ, ջաղու պառավ, իմ ներկա հեքիաթներում լինեն-տուլթանը, ցարը, բուրժուան և այլն»¹⁹: Բսահակյանը հակադրում է ոչ թե հեքիաթային-ֆանտաստիկ ուժեր, այլ իրական մարդկային գծերով կերտված կերպարներ՝ որոշ հեքիաթների հաղորդելով սոցիալական լիցք:

Ի տարբերություն ժամանակի խորհրդապաշտների, որոնք հետաքրքրություն էին ցուցաբերում բանահյուսության արտաքին ձևի նկատմամբ՝ Բսահակյանը, խորագիտորեն տեսնելով ժողովրդական բանավեպի բազմաշերտությունը, այն դիտարկում է որպես ժողովրդական աշխարհայացքի, ազգային հոգեբանության ու լեզվամտածողության բացահայտման աղբյուր²⁰:

Թեպետ որոշ բանասերներ Բսահակյանի հեքիաթները համարում էին մշակված «թանձր խորհրդապաշտությունն ի խնդիր»²¹, սակայն վերջինս

¹⁴ Տե՛ս Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Արձակ էջեր, Երևան, 1963, էջ 20:

¹⁵ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 392:

¹⁶ Տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Հայ գրականությունը և բանահյուսությունը, էջ 218:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 258:

¹⁸ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 270–271:

¹⁹ Նույն տեղում, էջ 270:

²⁰ Տե՛ս Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Ավ. Բսահակյանի արձակը, Երևան, 1975, էջ 180–182, նաև՝ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավետիք Բսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, էջ 8–9:

²¹ Տե՛ս Հ. Օ շ ա կ ա ն. Համապատկեր արևմտահայ գրականության, յոթերորդ հատոր, (Արվեստագետ սերունդ), Անթիլիաս, Լիբանան, 1979, էջ 279:

խորհրդապաշտության հանդեպ ցուցաբերում էր քննադատական որոշակի վերաբերմունք՝ կողմնորոշվելով դեպի ռեալիստական արվեստը²²: Պատահական չէ, որ 1926 թ. նամակներից մեկում բանաստեղծը մերժում է իր ստեղծագործական առնչակցությունը սիմվոլիզմի հետ²³:

Բսահակյանը անցյալում՝ մասնավորապես ժողովրդական հեքիաթներում, խորասուզվելով էր փորձում գտնել ազգային «իդեերի, փափագների ու երագների», ապագայի նկատմամբ խորը հավատի ու լավատեսության նախաշերտերը, ժողովրդի «սիրտն ու հոգին»։ «Հեքիաթների մեջ ժողովուրդները արտահայտում են իրենց իդեերը, փափագները, տենչերը, երագները բնության մասին. նրա ընթացքի, էության մասին, նրա և մարդու միջև մղվող կռվի մասին և իրենց հավատի մասին, որ վերջը հաղթելու են բնության ուժերին և ծառայեցնելու մարդու պետքերին», – գրում է Բսահակյանը՝ նույն խտացման մեջ հավելելով. «Հեքիաթների մեջ մարդկանց ցանկությունն ու հավատը հեռավոր, հնարավոր գյուտերի մասին՝ հեռուները տեսնելու, թռչելու, օգնելու, բժշկելու հիվանդությունները. հավատը պրոգրեսի, կյանքի, աշխարհի, հասարակության կատարելագործման, բարելավման հանդեպ, և միշտ լավատես, օպտիմիստ, մուրազին, նպատակին հասնող, բարիի հաղթանակը չարի վրա: Մի խոսքով՝ մարդու սիրտն ու հոգին»²⁴:

«Ժողովրդին՝ լեզվի ստեղծողին և անսխալ քերականագետին» դիմելու պատգամ-խորհուրդն Բսահակյանը ստանում է Հովհաննես Հովհաննիսյանից, որը «հայերենի քերականական տարակուսանքները փարատելու համար դիմում էր ժողովրդին»²⁵:

Իր խտացումներից մեկում Բսահակյանը կարևորում է «ոճից, ժողովրդական լեզվից, ճարտարապետական ոճից» օգտվելու անհրաժեշտությունը «այն չափով, որ միայն նրա տպավորությունը թողնե»: «Ոճի, լեզվի զգացումը պիտի տալ: Այնպես պիտի գրել, որ միայն նրանց զգացումը, տպավորությունը լինի, ժողովրդական լեզվի տպավորությունը, զգացումը», – շեշտում է Բսահակյանը²⁶:

Իր հեքիաթներում բանաստեղծը հավատարիմ է մնում վերոհիշյալ սկզբունքին՝ ստեղծելով ժողովրդական լեզվի և ոճի պատրանք:

Այսպիսով՝ միանգամայն արդարացի է Ավիկ Բսահակյանի դիտարկումը, ըստ որի՝ Բսահակյանն «իր լեզենդներում, առակներում, հեքիաթներում բնավ չի ձգտել գրել բանահյուսության ոճի նմանողությամբ, սազեցնել իր լեզուն ժողովրդական լեզվին, «գարդարել» իր գրվածքը ֆոլկլորային գույներով, երանգներով»²⁷: Ուշագրավ է նաև Պ. Մակինցյանի տեսակետը, ըստ որի՝ «... Ավ. Բսահակյանը մշակել է նաև մի ուրույն ոճ, որը կարելի է արևելյան ոճ անվանել:

²² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, էջ 377:

²³ Տե՛ս Ավետիք Բսահակյանի նամակներից. – Սովետական գրականություն, 1971, -1, էջ 138–139:

²⁴ Ա. վ. Բ. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Ծանոթ և անծանոթ էջեր, 311–312:

²⁵ Ա. վ. Բ. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Երկեր, հ. 4, Երևան, 1959, էջ 59:

²⁶ Տե՛ս Ա. վ. Բ. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Ծանոթ և անծանոթ էջեր, էջ 313:

²⁷ Ա. վ. Բ. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Ավետիք Բսահակյանի արձակը, էջ 181:

Մա արդեն ժողովրդական բարբառ չէ, այլ գրական լեզու, որը սակայն չի կորցրել բարբառի բույրը»²⁸:

Մի առիթով Բսահակյանը խոստովանում է, որ իրեն մշտապես մտահոգել է աշխարհի «չարիքները վերացնելու» գերխնդիրը կամ ինչպես որակում է՝ «տիեզերական» խնդիրները. «Աշխարհի մասին խորհելը, նրա չարիքները վերացնելու մասին էլք որոնելը միայն մեծ մարդկանց մենաշնորհը չէ, ամեն մի անհատ բնական մղում ունի այդ չարալիկող հարցերին պատասխան փնտրելու, սարի հովիվը այնքան ինչքան մեծ մարգարեները: Ես սկսեցի որոնել ճշմարտությունը, որոնել փրկությունը մեծ փիլիսոփաների, մեծ գիտնականների, մեծ մարգարեների մոտ և իմ սրտի մեջ»²⁹, – ասում է բանաստեղծը: Տառապող մարդկությունը ազատագրելու գաղափարով տոգորված Բսահակյանն ուղիների և ուժեղ անհատի՝ հերոսի փնտրտուքի մեջ էր: Բսահակյանի պատկերացումների հերոսները՝ «հրեղեն գործողները», կովի են ելնում «վիշապների, դևերի, սուլթանների, ցարերի, իշխանների ու բուրժուանների դեմ» և հաղթանակում «հոգուտ ամբոխի արգանդի»³⁰, – գրում է Բսահակյանը «Հիշատակարանում»:

Մտատանջող հարցերի պատասխանները փնտրում էր, մասնավորապես, մարդկային տենչերին հագուրդ տվող առասպելներում, լեգենդներում ու հեքիաթներում, դյուցազնական հեթանոս անցյալում ու փիլիսոփայական այլազան ուսմունքներում:

Նկատելի է որոշակի հարազատություն բանաստեղծի պատկերացումների հերոսի և Նիցշեի Գերմարդու (Übermensch) կերպարի միջև: Նիցշեի վարդապետությունը մշտապես եղել է Բսահակյանի քննության, մտասնեռումների առանցքում, փիլիսոփայական հետաքրքրությունների շրջանակում³¹: Նիցշեից կրած ազդեցության մասին փաստում է նաև բանաստեղծը. «Ինձ ասում են նիցշեական: Ես երկար ժամանակ եղել եմ նիցշեականության ազդեցության տակ, դա ճիշտ է: Եղել եմ նաև տոլստոյական: Նրանց միջոցով ես հասել եմ ինքս ինձ: Ես շատ շնորհակալ եմ Տոլստոյից, Շոպենհաուերից, Բուդդայից, որոնք ինձ շատ-շատ բան սովորեցրին...»³²: Բսահակյանի մեկնաբանությամբ՝ Նիցշեի Übermensch-ը՝ «հերոս է. հերոսը հրեղեն մարդ է»³³:

Հրեղեն Մարդու՝ հերոսի, անհրաժեշտությունը տեսնում էր նաև Բսահակյանը: Ահա, թե ինչ է գրում բանաստեղծն իր «Հիշատակարանում». «Պետք է ստեղծել «հրեղեն մարդիկ» (Übermensch): Հրեղեն Մարդ, որ հրեղեն խոսքեր ունենա և հրեղեն գործեր կարողանա կատարել...»³⁴:

Նման հերոսների նախատիպեր բանաստեղծը տեսնում է հատկապես հայկական հեքիաթներում. ««Հրեղեն» (հուրն-հրեղեն). (հուրն-հրեղեն աղջիկ, հրեղեն ձի, հրեղեն տղա) բառը, որքան ինձ հայտնի է, հայոց լեզվի և

²⁸ Պ. Մ ա կ ի ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 114:

²⁹ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 186:

³⁰ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 269:

³¹ Տե՛ս Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Ավետիք Բսահակյան, գիրք I, էջ 253:

³² Նույն տեղում, էջ 271:

³³ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 268:

³⁴ Նույն տեղում, էջ 276:

այն էլ հայկական հեքիաթների մեջ է գործածվում, որ նշանակում է գերբնական, կախարդական, չնաշխարհիկ, հրաշալի»³⁵: Բսկ ինչպիսի՞ն էր Բսահակյանի հերոս-առաջնորդի իդեալը՝ Գերմարդը. «Նա պիտի ոգևորվի մահով-Նիրվանայով: Նա պիտի պատվասեր ու ասպետ լինի, հերոս ու դյուցազն, պատերազմում զենքը ձեռքին պիտի մեռնի տանջվողի ու թշվառի համար և պիտի հսկա քարի տակ թաղվի, զինվորների հետ, ուռենու տակ»³⁶:

Բսահակյանը հերոսականացված ուժեղ անհատներ է կերտում «Արծվամանուկը», «Լեռների հսկան» լեզենդներում, «Մասսա Մանուկ» և «Սասմա Մհեր» պոեմներում: Ուշագրավ է, սակայն, որ հրեղեն՝ Գերմարդու նախատիպը ժողովրդական հեքիաթներում տեսնող բանաստեղծն իր հեքիաթներում նման հերոսական կերպարներ չի ստեղծում՝ կերտելով նույնիսկ հերոս-անհատին բոլոր որակներով հակադրվող կերպար (Ադա Նազար)՝ կեղծ հերոս, որպեսզի ավելի տեսանելի դարձնի հերոս-առաջնորդի անհրաժեշտությունը: «Ադա Նազար» հեքիաթը ժողովրդական բանահյուսական նմուշի յուրօրինակ մեկնաբանություններից է:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Վարդանյանը, « Ավ. Բսահակյանի կերտած Նազարը հեքիաթային հերոս չէ այդ բառի բուն իմաստով: Նա իրական մարդ է՝ գյուղի «ծույլ ու անճարակ» զգիր»³⁷: Նազարի կերպարը տիպականացնելով և ենթարկելով ներքին, հետևաբար նաև վարքի փոփոխությունների³⁸՝ Բսահակյանը զգալիորեն հեռանում է հեքիաթի ժանրային առանձնահատկություններից՝ այսպիսով ներկայացնելով տիրոջ, առաջնորդի կերպար, որը հակոտնյան է բանաստեղծի պատկերացումների հերոսի, հերոսականության, ուժեղ առաջնորդի: Սոցիալական աստիճաններով բարձրացած անարժան տիրակալը ծիծաղում է այն արժեհամակարգի վրա, որով պետք է ուղղորդվի առողջ հասարակությունը և մերժում այն որակները, որոնք անհրաժեշտ են հերոս-առաջնորդին. «–Տեսա՞ր, կնիկ, ինչպես թագավոր դառա: Բա՛ էս չէ՞ ի՞նչ ասում, թե խելք ու կտրիճություն դատարկ բաներ են աշխարհքիս երեսին. մարդս բախտ պետք է ունենա, մենակ բախտ...»³⁹:

Ի հակադրություն հերոս անհատի, առաջնորդի, որը պետք է տաներ հանրության իր ետևից՝ ի նպաստ ընդհանուր բարօրության և ազատության, Բսահակյանը կերտում է եսակենտրոն սրիկայի՝ կեղծ հերոսի, որն անիրավորեն վայելում է առասպելածին փառքն ու իշխանությունը, ներկայացնում մի վտանգավոր իրավիճակ, երբ բախտը, «որը ոսկի ածող մի կույր հավ է, անարժանների գոգի մեջ է իր բնկալը դնում»⁴⁰: Հեքիաթում բախտը ժպտում է անարժանին, որի միջակական «աղալությունն» ու «արժանիքները» բազմաթիվ դժբախտությունների և անազատությունների պատճառ են դառնում. «Ու քառասուն ավագակները աղա Նազարի անունով

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 121–122:

³⁷ Ա. Վ ա ղ ա ն յ ա ն. Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Երևան, 1986, էջ 61:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 62–63:

³⁹ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1975, էջ 281:

⁴⁰ Նույն տեղում, էջ 271:

գարկում էին քոչ ու քարավան, արշավում էին գեղ ու քաղաքներ, կտրում, թափում, ավար առնում ու հարկ դնում վրաները:

Աղա Նազարի անունը թնդում էր ամեն տեղ. ժողովուրդները ահ ու սարսափի մեջ էին»⁴¹: Նազարի «աղայության, խելքի և քաջության» առասպելը ստիպում է թագավորներին, զինվորներին գեները վայր դնել, զլուխները խոնարհել նրա ոտքերի տակ, իսկ ժողովրդին՝ հպատակվել ու թագադրել Աղա Նազարին:

Արժանի առաջնորդ-հերոսի անհրաժեշտությունը բացահայտում է հեքիաթի վերջաբանը. «Եվ մինչև այսօր էլ կա ու կենդանի է Աղա Նազարը. նստել է գահի վրա, ծխում է մարգարտե չիրուխը և միտք է անում աշխարհքի բանը ու քա՛հ-քա՛հ ծիծաղում...»⁴²: «Աղա Նազարի ծիծաղը» հավերժական է լինելու առասպելներով առաջնորդվող հասարակության համար:

Իսահակյանի ինքնատիպ հեքիաթները զգալիորեն հարստացրեցին հայ հեքիաթագրության ավանդույթները և նոր ճանապարհներ ուղենշեցին ոլորտի զարգացման համար:

АВЕТИК ИСААКҮЯН – СКАЗОЧНИК

ЛУСИНЕ АЙРИЯН

Резюме

Аветик Исаакян рассматривал сказочный жанр как модель для развития армянской прозы. Как сказочник он не придерживался тех традиций, которые сложились в армянской литературной сказке. Он руководствуется другими принципами, уходя от дидактики педагогической направленности и не ограничиваясь обработкой народных сказок, создавая также авторские. В произведениях Исаакяна сказочные символы получают новую окраску, модифицируются. В сказках Исаакяна антагоничными, противоборствующими сторонами являются не фантастические силы, а образы, наделенные человеческими качествами. Так сказочник создает имитацию народного языка и стилистику. Исаакян был увлечен философией Ницше и его концепцией о сверхчеловеке: представление Исаакяна о герое и героизме имеет ярко выраженное родство со сверхчеловеком Ницше. Прототип сверхчеловека-героя Исаакян выявляет в народных сказках, однако, в своих литературных сказках не создает такой образ: скорее наоборот, черпает антигероя–Ага Назара, дабы наглядно иллюстрировать необходимость героизма.

⁴¹ Նույն տեղում, էջ 276:

⁴² Նույն տեղում, էջ 279:

AVETIK ISAHAKYAN AS A TALE - WRITER

LUSINE HAYRIYAN

S u m m a r y

Avetik Isahakyan considered tale as a sample-prototype to develop the Armenian prose. Contrary to the formed certain traditions in Armenian tale-telling, Isahakyan as a tale-teller is guided by other principles, that is, going away from the emphasized didactic educational orientation and being dissatisfied with only the working and stylization of the folk-tale, he creates his tales, as well. In the tales by Isahakyan, the symbols of the folk-tales acquire new colouring and meaning. In the works by Isahakyan, not fairy-tale fantastic forces are contrasted, but personages endowed with real human qualities. Thus the tale-teller creates an illusion of the folk language and style. Nietzsche's philosophy and the image of the superman have always interested Isahakyan. Nietzsche's *Übermensch*, that is Superman, has certain closeness with the imaginations of Isahakyan's hero, whose prototypes are, first of all, noticeable in the folk-tales. However, Isahakyan does not create such heroic personages creating even a false hero contradicting the individual – Agha Nazar, in order to make the necessity of the hero leader more noticeable.